ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/12

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «Այ Էմ Առ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Այ Էմ Առ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Այ Էմ Առ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 29.01.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Ս.թ. հունվարի 15-ին, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի (այսուհետև՝ Մրցույթ) շրջանակներում՝ անգործության ժամանակահատվածում, նույն մրցույթի մասնակից «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն էլեկտրոնային գրությամբ դիմել է Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել Մրցույթի շրջանակներում բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչված՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված

փաստաթղթերի ամբողջ փաթեթը՝ ներառյալ Մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները:

Սակայն, 21.01.2019թ. դրությամբ «Այ Էմ Առ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից չեն տրամադրվել նշված փաստաթղթերը, ինչպես նաև որևէ պատասխան չի ներկայացվել՝ դրանք չտրամադրելու վերաբերյալ: Նշված հանգամանքը հիմնավոր կասկած է առաջացրել ընկերության մոտ՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

Այսպիսով, «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը կոպտորեն խախտել է Մրցույթի ընտրված մասնակից ճանաչված ընկերության ներկայացված որակավորման փաստաթղթերն ստանալու և դրանց ծանոթանալու՝ Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված մեր իրավունքը, դրանով իսկ ուղղակիորեն անտեսելով գնման գործընթացի թափանցիկ և հրապարակային հիմունքներով կազմակերպման՝ Օրենքով ամրագրված սկզբունքը»:

Բողոքի քննության շրջանակներում «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«Ինչպես հայտնել էինք, 21.01.2019թ. դրությամբ «Այ Էմ Առ» ՍՊԸ-ին գնահատող հանձնաժողովի կողմից չէին տրմադրվել նշված փաստաթղթերը, ինչպես նաև որևէ պատասխան չէր ներկայացվել՝ դրանք չտրամադրելու վերաբերյալ, ինչը հիմնավոր կասկած էր առաջացրել ընկերության մոտ՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 61-րդ կետի համաձայն՝ Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը, որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

Հայտնում եմ Ձեզ, որ Բողոքի քննության շրջանակներում պատվիրատուի կողմից մեր ընկերությանն է տրամադրվել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագիրը, որին սակայն կցված չէ պայմանագրի պարտադիր հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիրը: Ընդ որում, բողոքներ քննող անձի հորդորով Պատվիրատուն խոստացավ սեղմ ժամկետում վերը նշված բացակայող փաստաթղթերը տրամադրել ինչպես Բողոքներ քննող անձին, այնպես էլ մեր ընկերությանը, սակայն մինչ օրս որևէ փաստաթուղթ որպես ապացույց պատվիրատուի կողմից չի ներկայացվել: Այսինքն, մեր ընկերությունը հնարավորություն չունեցավ հավաստիանալու, թե կոնկրետ ինչ բնույթի ծառայություններ են մատուցվել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից նշված պայմանագրի շրջանակներում և որքանով պատշաճ:

Վերը նշված հանգամանքը հիմք է տալիս մեզ հաստատապես պնդելու, որ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մրցույթի շրջանակներում ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում մրցույթի հրավերով սահմանված պահանջներին:

Հիմք ընդունելով վերը նշվածը՝ Բողոքներ քննող անձին խնդրում եմ.

1. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 12.12.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին մրցույթի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 08.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին մրցույթի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Վանուհի Մաթևոսյանը, Պետրոս Պետոյանը և Արսեն Մանուկյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ ստացված բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, Բողոքներ քննող անձի դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ՝ Պատվիրատու)՝ առաջարկելով նույն հոդվածով սահմանված ժամկետում Խորհրդին տրամադրել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճենները և Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն Բողոքներ քննող անձին է ներկայացրել Բողոքի քննության համար անհրաժեշտ համապատասխան փաստաթղթերը, սակայն Բողոքի վերաբերյալ որևէ գրավոր դիրքորոշում վերջինիս կողմից չի տրամադրվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Կարո Պողոսյանը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/12 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Այ Էմ Առ» ՍՊԸ-ի կողմից 29.01.2019թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 12.12.2018թ. նիստի թիվ 4 և 08.01.2019թ. թիվ 5 արձանագրությունները, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված բանավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Այ Էմ Առ» ՍՊԸ-ն և «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ:

Հրավերով սահմանվել է, որ Մրցույթի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ «ՈՒսումնասիրությունների իրականացման ծառայությունների» ձեռքբերումը, որի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ պայմանները.

«Ուսումնասիրությունների իրականացման ծառայություններ - ՀՀ պաշտպանության նախարարության «Դիտակետ» ծրագրի շրջանակներում զորացրված զինծառայողների հետ ելքային սոցիոլոգիական հարցումների իրականացում:

Ծրագրի խնդիրներն են՝

• պարզել զինծառայողների քաղաքացիական կյանքից զինվորական կյանքին, ինչպես նաև զինվորական կյանքից քաղաքացիական կյանքին անցնելու ադապտացիոն գործընթացների առանձնահատկությունները,

• գնահատել զորամասերի գույքային, նյութատնտեսական և սանիտարահիգիենիկ պայմանները, սննդից գոհունակությունը, առողջապահության, կրթության և ժամանցի կազմակերպման հնարավորությունները,

• գնահատել ծառայության կազմակերպման կառավարչական և ընթացակարգային հարցերից բավարարվածությունը ինչպես զորամասերում, այնպես էլ մարտական հերթապահության ընթացքում:

Հետազոտությունն իրականացվելու է տարեկան 2 անգամ:

Հետազոտության թիրախը.

«Դիտակետ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է ուսումնասիրել միայն 2016թ. զորակոչվածժամկետային զինվորական ծառայություն անցած զինծառայողների կարծիքը՝ ներառելով ՀՀ զինված ուժերից 2018թ. փետրվար և հուլիս ամիսներին զորացրված բոլոր երիտասարդներին, որոնք զինծառայություն են անցել առնվազն 12 ամիս և տվել են իրենց համաձայնությունը հարցմանը մասնակցելու համար:

1. Տեղեկատվության հավաքագրման մեթոդը.

Հետազոտություն պետք է անցկացվի դեմ առ դեմ սոցիոլոգիական քանակական հարցման մեթոդով, որի առջև առաջ են քաշվում հետևյալ պահանջները՝

1. Հետազոտության դաշտային աշխատանքները պետք է սկսեն զորացրումից ոչ ուշ քան 30 օր անց և տևեն ոչ ավել քան 60 օր:

2. Հետազոտությունը պետք է իրականացվի միայն համակարգիչների և/կամ պլանշետների միջոցով համապատասխան ծրագրային ապահովմամբ (Computer-assisted personal interviewing, համակարգչի օգնությամբ դեմ առ դեմ հարցազրույցներ):

3. Հետազոտությունը պետք է իրականացվի այնպիսի պայմաններում, որպեսզի ապահովվի զորացրված երիտասարդների կարծիքներ արտահայտման առավելագույնս անկաշկանդ միջավայր՝ ապահովել անկեղծության բարձր մակարդակ և բացառելով ցանկացած երրորդ անձանց միջամտությունը հարցման և տվյալների հավաքագրման գործընթացին:

4. Հետազոտության մեջ պետք է ներգրավել բավականաչափ թվով հարցազրուցավարների՝ սահմանափակելով յուրաքանչյուր հարցազրուցավարի կատարած հարցազրույցների թիվը մինչև դաշտային աշխատանքների ծավալի 2%-ը:

5. Բոլոր հարցազրուցավարները պետք է անցնեն մասնագիտական, բովանդակային, կազմակերպչական, ինչպես նաև գաղտնիության պահպանման վերաբերյալ վերապատրաստումներ, իրականացնեն փորձնական հարցումներ:

2. Տեղեկատվության հավաքագրման իրականացումը.

Հետազոտությունն իրականացվելու է ՀՀ ամբողջ տարածքով: Իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը կարող տրամադրվելու է ՀՀ ՊՆ կողմից, մասնավորապես զորացրվածներիորոշ տվյալներ՝ ըստ համաձայնության: Աշխատանքների իրականացման համար մարզային աշխատակիցների ներգրավումը կդիտվի որպես մրցակցային առավելություն:

Ծառայություններ մատուցողը պարտավորվելու է ձեռնարկել ողջամիտ անհրաժեշտ միջոցներ, որպեսզի հարցումն իրականացվի և հարցման մասնակցելու հնարավորություն

ապահովվի հարցման համար հասանելի զորացրված երիտասարդների՝ ՀՀ տարածքում առնվազն 80 տոկոս ծածկույթով և նրանց առնվազն 80 տոկոսի ներգրավմամբ:

3. Որակի ստուգումը.

Ծառայություններ մատուցողը պետք է առաջնորդվի նմանատիպ սոցիոլոգիական քանակական հետազոտությունների համար ներկայացվող որակի ստուգման միջազգային ընդունված չափանիշներով:

Ներկայացված մեթոդները պետք է ներառեն հետևյալ գործընթացները՝

• հարցազրուցավարների վերահսկում զուգահեռ այցերի միջոցով՝ առնվազն 10 տոկոս,

• բոլոր հարցաթերթերի որակի առաջնային ստուգում՝ բովանդակային և տրամաբանական մոնիտորինգի միջոցով,

• հեռախոսազանգով ստուգում՝առնվազն 50 տոկոս,

• հետադարձ այցի միջոցով ստուգում՝առնվազն 3 տոկոս,

• բոլոր հարցազրուցավարների վերահսկում GPS տեխնոլոգիաների միջոցով:

4. Տվյալների մշակումը.

Ակնկալվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

• հարցաթերթերի վերջնական տարբերակի մշակում, փորձարկում և լրամշակում

• հարցաթերթի ծրագրավորում CAPI ծրագրում,

• SPSS տվյալների շտեմարանի նախապատրաստում,

• ծրագրի հարցաթերթի և տվյալների շտեմարանի փորձարկում,

• հարցաթերթերի ստուգում դաշտային փուլից անմիջապես հետո,

• մասնագիտական մշակում և կոդավորում,

• տվյալների շտեմարանի ստուգում և մաքրում:

5. Հետազոտության ակնկալվող արդյունքները.

Ծառայություն մատուցողը պարտավորվում է տրամադրել հետևյալ հաշվետվողական նյութերն ու փաստաթղթերը.

• հետազոտության մասնակցության վերաբերյալ վիճակագրական տվյալներ,

• հետազոտության իրականացման վերաբերյալ մեթոդաբանական հաշվետվություն՝ հետազոտության իրականացման մանրամասն նկարագրությամբ,

• հետազոտության տվյալների շտեմարանը SPSS և/կամ Excel ձևաչափով, բացառելով հարցվողների անձնավորված տվյալները,

• հետազոտության արդյունքների ներկայացում (*. ppt ձևաչափով, մինչև 200 սլայդ), համեմատական վերլուծություն նախորդ հետազոտության արդյունքների հետ,

• հետազոտության արդյունքների վերաբերյալ տեքստային զեկույց(*.docx ձևաչափով մինչև 100 էջ),

• Հետազոտության արդյունքների մանրամասն ներկայացում ըստ ՀՀ ՊՆ կողմից առանձնացված չափանիշների:

6. Ծառայություններ մատուցողի փորձառությունը և աշխատանքային թիմի որակավորումը.

Ծառայություններ մատուցողը պետք է ունենա.

• նվազագույնը 5 տարվա հաջող փորձ սոցիոլոգիական հետազոտությունների, կարծիքի ուսումնասիրության, գնահատման և մոնիթորինգի ոլորտներում: Զինված ուժերի վերաբերյալ հետազոտական փորձառությունը կդիտվի որպես առավելություն,

• CAPI համակարգով հետազոտության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական և ծրագրային միջոցներ, այն է համակարգիչների և/կամ պլանշետների բավականաչափ քանակ և տվյալների անվտանգ փոխանակում ապահովող ծրագրային լուծումներ,

• նմանատիպ աշխատանքներ իրականացնելու նվազագույնը 1 տարվա փորձառությամբ մշտական անձնակազմ և դաշտային աշխատանքների իրականացման համար համապատասխան թվով և փորձառությամբ աշխատակիցներ,

• ապահովված լինի գրասենյակային բավարար տեխնիկական պայմաններով,

• սեղմ ժամկետներում աշխատելու ունակություն»:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատուցված ծառայությունների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Նույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սոցիոլոգիական ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների մատուցված լինելը:

բ. նույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Հանձնաժողովը 12.12.2019թ. նիստի թիվ 4 արձանագրության 3.1 կետով արձանագրել է, որ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի գնային առաջարկը կազմել է 118,695,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որը այնուհետև նվազեցվել է և կազմել է 28,450,000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության 4.1 կետով Հանձնաժողովը Մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին, իսկ 4.2 կետով՝ որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու նպատակով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացվել է 26.09.2016թ. կնքված SPAPIIC-3.4.3 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ նաև պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Խորհրդատուն պարտավորվում է իրականացնել նույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված Ա-ի, այն է՝ «Տեխնիկական առաջադրանք և աշխատանքների շրջանակներ»-ում սահմանված ծառայությունները:

Հանձնաժողովը 08.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով որոշել է «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել Հրավերի

պահանջներին համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը հայտնեց, որ Մրցույթի շրջանակներում՝ անգործության ժամանակահատվածում դիմել է Մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել Մրցույթի շրջանակներում բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընտրված մասնակից ճանաչված՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը՝ ներառյալ Մրցույթի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի պատճենները: Սակայն, Հանձնաժողովի կողմից չստանալով նշված փաստաթղթերը, ինչպես նաև չստանալով որևէ պարզաբանում դրանք չտրամադրելու վերաբերյալ, Ընկերության մոտ հիմնավոր կասկած է առաջացել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման չափանիշները Մրցույթի հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ: Այնուհետև, արդեն Բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուի կողմից Ընկերությանն է տրամադրվել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագիրը, որին սակայն կցված չի եղել պայմանագրի պարտադիր հավելված հանդիսացող տեխնիկական բնութագիրը: Ընդ որում, թեև բողոքներ քննող անձի հորդորով Պատվիրատուն խոստացավ սեղմ ժամկետում վերը նշված բացակայող փաստաթղթերը տրամադրել ինչպես Բողոքներ քննող անձին, այնպես էլ մեր ընկերությանը, սակայն որևէ փաստաթուղթ Պատվիրատուի կողմից չներկայացվեց: Այդպիսով, Ընկերության ներկայացուցիչն արձանագրեց, որ Ընկերությունը այդպես էլ հնարավորություն չունեցավ ծանոթանալու «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագրի շրջանակներում մատուցված ծառայությունների տեսակին, ինչպես նաև նշեց, որ նշված պայմանագրի տեխնիկական բնութագրի բացակայության պայմաններում Պատվիրատուն չի կարող պայմանագիրը գնահատել Հրավերով նախատեսված պահանջներին բավարարող:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ)

- 32-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտի՝ ներառյալ գնային առաջարկի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև մասնակցի, այդ թվում՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի

ամբողջական նկարագիրը պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջը ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում են բնօրինակ փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարելու դրանք և վերադարձնում է քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությունը:

- 61-րդ կետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք)

-3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքի վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

-6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

-13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

- 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- Մրցույթի գնման առարկա է հանդիսանում ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների ձեռքբերումը,

- Ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում սոցիոլոգիական ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների մատուցված լինելը,

- Հանձնաժողովը Մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին և որոշել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը,

- «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորման նպատակով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր ներկայացվել է 26.09.2016թ. կնքված SPAPIIC-3.4.3 ծածկագրով պայմանագիրը,

- Հանձնաժողովը որոշել է «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել Հրավերի պահանջներին համապատասխանող և վերջինիս հայտարարել ընտրված մասնակից՝ 1-ին չափաբաժնի մասով:

- Բողոքի քննության շրջանակներում Պատվիրատուի կողմից Ընկերությանը տրամադրվել է «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագիրը, որում բացակայել է Պայմանագրի 1-ին կետով նախատեսված նույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված Ա-ն՝ «Տեխնիկական առաջադրանք և աշխատանքների շրջանակներ»-ը:

- Մինչև Բողոքի քննության համար գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետի ավարտը Պատվիրատուի կողմից չներկայացվեց վերը նշված փաստաթուղթը և չապացուցվեց «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես, «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ծատայությունների նմանատիպությունը Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված ծառայություններին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ.

- Հանձնաժողովը «Այ էմ Առ» ՍՊԸ-ի պահանջով՝ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես նմանատիպ ներկայացված՝ նախկինում կատարված SPAPIIC-3.4.3 պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Տեխնիկական առաջադրանքն Ընկերությանը չտրամադրելով, գործել է ոչ իրավաչափ, խախտելով Կարգի 32-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջը:

- Հանձնաժողովի կողմից չներկայացվեց որևէ ապացույց առ այն, որ «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ի կողմից որպես Մրցույթի շրջանակներում «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացված պայմանագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված պահանջներին:

- SPAPIIC-3.4.3 պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Տեխնիկական առաջադրանքի բացակայության պայմաններում Հանձնաժողովը չէր կարող նշված պայմանագիրը գնահատել որպես Հրավերով նախատեսված պահանջներին համապատասխանող, քանի որ Հրավերով սահմանվել է, որ նմանատիպ են համարվում սոցիոլոգիական ուսումնասիրությունների իրականացման ծառայությունների մատուցված լինելը, իսկ նշված պայմանագրով մատուցված ծառայությունների տեսակը կարող էր պարզվել միայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածի առկայության պարագայում:

- SPAPIIC-3.4.3 պայմանագիրը առանց նշված Հավելվածի չի կարող համարվել աբողջական, քանի որ այն հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Այ էմ Առ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 29.01.2019թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-12/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել՝

• 12.12.2018թ. նիստի թիվ 4 արձանագրության 4.1 կետով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին մրցույթի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

• 08.01.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության 1.2 կետով «Բիզնես Քոնսալթ» ՓԲԸ-ին մրցույթի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ